



Յուզարկաւորութեան պահուն. քափօրը պիտի մեկնի եկեղեցիէն

բարի ժպիտին հետ: Ու հիմա կը դաշինք թէ այդ քաղցր ժպիտն ալ կը սառնէր մեր հայրիկին շրթներուն վրայ. ու հազիւ կը յաջողէինք զսպել մեր արցունքները:

Մայիս 16, Կիրակի. վերջին օրն է. այցելուներ շատ. վարդապետներ, բարեկամներ կը փութան հիւանդանոց. ինք կեանքի ու մահուան մէջտեղ. յաճախ կ'ունենայ լուսաւոր վայրկեաններ, կը ճանչնայ շուրջինները, կ'օրհնէ, կը ժրպտի, նշանացի բաներ մը կ'ըսէ, զոր կը հասկնայ միայն իրեն ծառայող վարդապետը ու թարգմանի զեր կը կատարէ: Կը համբուրէ ձեռքին մէջ սեղմած խաչելութիւնը, «Աստուծոյ կամքն օրհնեալ ըլլայ» կը մըմնջէ մեղմօրէն: Լուսաւոր պահուն մը, կը նայի իր եղբորորդւոյն աչքերուն մէջ, եւ «Մահն ամէնուս համար է» կ'ըսէ, ու զարձեալ կը սուղուի խոր թմրիւրի մէջ:

Հանդարտ է, երեկոյեան զէմ, մինչ ի-

րեն սպասարկող վարդապետը քոյն է եւ թեթեւ ընթրիք մը կ'ընէ: Գրպած. հիւանդն եւս ուտելու բան մը կը խնդրէ, կատակելով թէ ինչո՞ւ վարդապետը մինակ կ'ուտէ. դաւաթով պտղահոյզ կը տրուի: Ապա կը ննջէ: Աւելի ուշ, խաչելութիւնը սեղմած, Յիսուսի անունը կու տայ. նըշանացի բաներ մը կ'ուզէ ըսել՝ զոր ըստ սպասարկող վարդապետը չի հասկնար այս անգամ: Գիշերուան ժամը 9ն է: Վանքէն երկրորդ վարդապետ մը եւս կու գայ միտին հսկելու: Միտին կ'արտասանեն հոգեվարքի աղօթքները. հիւանդը կը հետեւի՝ հեւ ի հեւ շնչառութեամբ:

Անդին վանքին մէջ ալ եռուղեւ կայ. աղօթք եւ սպասում: Եւ ի՞նչ տխուր զանգ... դիշերուան 22.45ին կը հնչէ հեռաձայնը. չենք ուզեր երկարել մեր ձեռքը...:

Արդէն հինգ վայրկեանէ ի վեր զաղրած է այդ պաշտելի սիրտը...:

Մայիս 17: Երկուշաբթի առաւօտ, հիւանդանոցի եկեղեցիին մէջ, եկեղեցական չքեղ զգեստաւորումով կը հանդէժի Գրպած. Սրապիտն Արքեպիսկոպոս Ուլուհոնեան. զաղաղին շուրջ մոմեր, ծաղիկներ, աղօթքներ. առաջին այցելուներէն մէկը կ'ըլլայ Վենետիկի Ամնատ. Ծիրանաւոր Պատրիարքը՝ հետեւորդներով: Եւ ահա թափօրը վանականներու, բարեկամներու: Քաղաքին լրադիրները կը դուժեն տխուր լուրը, զնահատական զեղեցիկ տողերով հանդուցեալին վարքին ու դործունէութեան. կը տեղան ցաւակցական հեռագիրները: Նոյն երեկոյեան, համեստ թափօրով՝ Ս. Ղազար կը փոխադրուի հանդուցեալին բաց դաղաղը, ու տեղի կ'ունենայ թաղման արարողութեան առաջին մասը:

Մայիս 18: Երեքշաբթի առաւօտ կը հասնի Ուխտիա Ընդհ. Արքահայրը՝ Գերապաձառ Հմայեակ Վարդ. Կէտիկեան

Արեւելքէն: Կը կատարուի հանդիսաւոր պատարագ ու հոգեհանգիստ: Բաղմաթիւ այցելուներ կու գան յետին յարգանք մատուցանելու սիրելի ննջեցեալին:

Մայիս 19, Չորեքշաբթի: Ս. Ղազարի տխուր ու թաւ զանդը ալիք ալիք կը տարածուէր Վենետիկի լճակին վրայ, որ այդ օրը խոռվալոյզ կը ծածանէր, պայծառ արեւու մը տակ:

Յուզարկաւորութեան արարողութեան կը նախագահէր Վենետիկի Ամնատապոսի Պատրիարքը Ծիր. Ուրպանի: Ներկայ էին մերձաւոր թեմերու, Պելլունոյի եւ Վիթթորիոյ Վենետիկի Եպիսկոպոսները, եկեղեցական առաջնորդներ, ժողովրդապետներ՝ Լիտուիէն, Վենետիկէն ու մերձաւոր քաղաքներէ եւ բաղմաթիւ Մեծաւորներ կրօնական Հաստատութիւններու:

Միլանի Հայոց հոգեւոր Հովիւ Գրչն. Զգօն Եպս. Տէր Յակոբեան եւս ներկայ էր, բաղմաթիւ հետեւորդներով, իր եղ-



Գերեզմանատան մէջ, հողի օրհնութեան պահուն



Թաղումեն ետք, սգաւոր ազգականներու հետ

բայրական ցաւակցութիւնը բերելու Մը-
խիթարեան մեծ սուրբին:

Վենետիկի Կուսակալը նախորդ երե-
կոյ փութացած էր իր յարգանքը մատու-
ցանելու հանդուցեալ Արքեպիսկոպոսին.
իսկ այսօր եկած էր փոխ-կուսակալը:
Հոն էին Փրանսական հիւպատոսն ու փոխ
հիւպատոսը, եւ քաղաքական բաղմամբիւ
ներկայացուցիչներ (փոխ-քաղաքապետ,
ոստիկանապետ եւ այլն...):

Ս. Պատարագը մատուց Ուխտիս Ընդհ.
Արքահայրը Գերպ. Հմայեակ Վարդ. Կէ-
տիկեան. իսկ թաղման կարգն ու արա-
րողութիւնը՝ Գերպ. Կարապետ Եպիսկ.
Ամատունի, Առաքելական Եքսարք Ֆրան-
սայի Կաթ. Հայոց, առնթրեալից ունե-
նալով վարդապետներ եւ սարկաւաղներ:

Մահուան տխուր լուրը Վենետիկ փու-
թացուցեր էր բաղմամբիւ Հայեր, Միլանի
Հայ Տունի նախագահ Պ. Երուանդ Հիւ-

սիսեան, Իտալահայ Միութեան նախա-
գահ Պ. Ստեփան Սրապեան, Մշակու-
թային Միութեան նախագահ Բժ. Արա-
մայիս Սրապեան, բաղմամբիւ այլ բա-
րեկամներ, նախկին աշակերտներ, ու
րոնք երախտագիտութեամբ եկած էին
ուխտական մոմ մը վառելու եւ ննջեցեա-
լին հողուոյն համար աղօթք մը մըմնջելու:
Հոն էին Մուրատ-Ռափայէլեանի ամբողջ
աշակերտները՝ տեսչական կազմով:

Դադաղին կը հետեւէին սգաւոր եղ-
բայրը՝ Մկրտիչ Ուլուհոճեան, նահատակ
մէկ ուրիշ եղբոր որդին Բժ. Վահրամ Ու-
լուհոճեան եւ դարմուհին՝ Տիկին Քրիս-
տինէ Նաճարեան եւ բաղմամբիւ ազգա-
կաններ եւ հաւատացեալներ:

Դադաղը կը կրէին Ս. Ղազարու տպա-
րանի աշխատաւորները եւ վանքի սպա-
սարկունները, որոնք ինքնայօժար ցանկու-
թիւն յայտնած էին, կատարելու այդ նը-



Ս. Ղազարու վանական գերեզմանատունը

ւերական պարտականութիւնը, զետեղե-
լով նաեւ զեղեցիկ պսակ մը. արդարեւ
հանդուցեալը իր բարի եւ հայրական բը-
նաւորութեամբ ամէնուն ալ հասարակաց
հայրն էր եղած:

Անցնելով վանքի ներքին սրահներէն եւ
ընդարձակ շրջանով մը նոճիներու ճանա-
պարհով, մեռելական թափօրը հասաւ գե-
րեզմանատուն, ուր կը հանդէսէին մեծ վա-
տակաւորները Միխիթարեան Ուխտին:
Բոլոր մը հող նետուեցաւ դադաղին վրայ.
Բոլոր մը հող դադաղին վրայ անոր՝ որ
հերոսական ճիգերով կրկնապատկած էր
Ս. Ղազարու հողային տարածութիւնը.
Կրթիչ 14.000 մեթր քառակուսի տարա-
ծութիւն յիճէն լեցնել յաջողած էր, այն
մեծ յոյսով թէ օր մը հոն պիտի կանգնէր
փառաւոր ու արդիական նոր դրաղարան
մը եւ հայկական չքեղ թանգարան մը: Ա-

ւա՛ղ, չկրցաւ ան իր օրով տեսնել իրա-
կանացած այդ զեղեցիկ երազը. կը յու-
սար, մինչեւ վերջին շունչը:

Հանդէ՛հ՝ հիմա խաղաղ, սիրելի՛ Արքա-
հայր, որ երեսուն տարի այս կղզեակին
համար վաստակեցար, խորհեցար ու ըս-
տեղծեցիր. հանդէ՛հ խաղա՛ղ քու հողիդ
վրայ, թէ եւ հեռու քու պաշտելի Դատե-
մէն: Ս. Ղազարի ներկայ հողին ու տա-
րածութեան կէսը դուն բերիր, իբր դա-
ւակ շինարար քու շէն Սարբերդին: Քու
սուրբ աճիւններդ թող հիմերն ըլլան վաղ-
ուան շէնքերուն եւ քու բարի հողիդ սա-
ւառնի Ս. Ղազարու կամարներուն տակ,
ուր տակաւին երկար պիտի յիշեն քեզ քու
սիրասուն զաւակներդ՝ քու հայրական
զէմքիդ անոյշ ժպիտին հետ:

Հ. Ն. Տ. Ն.